

ՀԱՂՈՐԴՈՒՄ REPORT СООБЩЕНИЕ

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*

ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ*

DOI:10.57155/QMXH8786

ՎԻԵՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ¹

Բանալի բառեր՝ Ձեռագիր, բժշկագիտություն, բնագիտություն, նկարագրություն, հանրալեզվաբանություն, բառապաշար, հայերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, եվրոպական բժշկագիտություն:

Հայկական բժշկագիտության պատմության ուսումնասիրության աղբյուրները այն ձեռագիր մատյաններն են, որոնք ավանդել են միջնադարյան հայ բժշկապետերի և ժողովրդական բժիշկների ստեղծած գիտելիքը: Բժշկական բուսականություն ունեցող այս ձեռագիր ժառանգությունը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների, Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի, Ֆրանսիայի Ազգային, Թյուրինգենի համալսարանի, Բրիտանական գրադարաններում, և այլ հավաքածուներում: Հաշվի առնելով հրապարակված ձեռագրացուցակների տվյալներն, ինչպես նաև այն հանգամանքը, որ շարունակաբար նոր ձեռագրեր են ի հայտ գալիս տարբեր հավաքածուներում, կարելի է հայերեն բժշկական ձեռագրերի ընդհանուր թիվը համարել մոտ 1500 միավոր՝ չհաշված նաև բազմաթիվ անհատական ձեռագրեր:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք. գ. ք., hasmik.kirakosian@gmail.com, հաղորդումը ստանալու օրը՝ 11 դեկտեմբերի, 2025:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք. գ. ք., makaryanvenera@yahoo.com:

¹ Սույն հաղորդումը տպագրվում է «Կին դեկլարանտի առաջնադասական ուղղված ծրագիր 2024» մրցույթի շահառու (ծածկագիր՝ 24WS-6B015) «Լեզվական իմացություն. բազմալեզվություն թե՛ բազմամանրալեզվություն – 16-18-րդ դարերի հայերեն ձեռագիր դեղագրերի և բժշկականների հանրալեզվաբանական ֆունկցիան» ծրագրի շրջանակում:

մաթիվ ժողովածուներում տեղ գտած բժշկական հատվածները, գեղագրերը և հայատառ թուրքերեն գրված բժշկարանները:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող բժշկական ձեռագրերի մոտավոր թիվը 86 է, որոնց ի մոտո ուսումնասիրության համար 2025 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 6-ը մենք՝ Մատենադարանի «Բժշկական և բնագիտական բնագրերի ուսումնասիրման խմբի» ղեկավար Հասմիկ Կիրակոսյանը և Արևելագիտության բաժնի ավագ գիտաշխատող Վեներա Մակարյանը, այցելեցինք Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան: Մենք նպատակ ունենք հանրալեզվաբանական քննության համար բժշկական ձեռագրերի ցանկից առանձնացնել մատյաններ և դրանց նյութը ներառել թեմայի ուսումնասիրության շրջանակ:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող հայերեն ձեռագրերի ընդարձակ նկարագրությունները՝ ներառյալ հիշատակարանները, հրատարակվել են «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա» եռահատորյակում²: Այս նկարագրությունները հիմք ծառայեցին ուսումնասիրման ենթակա ուսումնասիրվող ձեռագրերի նախնական ցանկը կազմելու և տեղում ուսումնասիրելու համար. դրանք են՝ հմր 17, 199, 254, 296, 310, 540, 554, 637, 639, 658, 776, 898, 1008, 1071, 1074, 1375, 1582, 1776, 1857 ձեռագրերը:

Այստեղ ներկայացվում են ուսումնասիրված ձեռագրերի մասին այն տեղեկությունները, մասնավորապես՝ բովանդակային և լեզվական առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված են դրանց հանրալեզվաբանական ուսումնասիրության հեռանկարները:

Վիեն. 310 – 1438 թ. գրված այս ձեռագիրը, թերևս, Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանի բժշկագիտական ձեռագրերի շարքի մեզ ամենից շատ հետաքրքրող ձեռագիրն էր, որի մանրամասն բովանդակային ուսումնասիրությունն ուղղակի անհրաժեշտություն էր: Այս ձեռագիրը Վենետիկի, 1294 թ. մագաղաթի վրա գրված հայերեն ամենահին բժշկարանի՝ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» ազատ, մի շարք փոփոխություններով խմբագրությունն է (բանաբաղություն)³: Այն ընդօրինակել է տվել Հովհաննես հեքիմը⁴ Վարպետ Սկանտարի որդին: Վերնագիր չունենալու պատճառով այն պայմանականորեն

² Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Բ. Ա., կազմ. ՝ Հ. Յակովբոս, Վ. Տաշեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1895, Բ. Բ., կազմ. ՝ Հ. Համադասյան, Վիեննա, 1963, Բ. Գ., կազմ. ՝ Հ. Օգոստինոս վրդ. Սեքուեան, Վիեննա, 1983:

³ Ղևոնդ Յովնանեան, Հետազոտությունք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վենետիկ, 1897, էջ 129-162:

⁴ Հեքիմ բաղի համար տե՛ս ծան. 6:

կոչում են «Ախրապատին Յովհաննու բժշկի» կամ «Հովհաննես հեքիմի բժշկարան»։ Գրիչն է Աբրահամ աբեղան։ Փաստորեն, Վիեն. 310 ձեռագիրը բովանդակում է հայկական միջնադարյան բժշկության ամենաառաջին բժշկագիտական (դեղաբանություն) աշխատությունը՝ «Գագիկի դեղարան»-ը (10-րդ դ. վերջ — 11-րդ դ. սկիզբ)։ Դրա բովանդակային քննահամեմատական ուսումնասիրությունը թույլ է կտա նորովի ներկայացնել մինչ այժմ առաջ քաշված և տարածված մի շարք թեզերից բոլորովին տարբեր տեսակետներ⁵։

Վիեն. 17 ձեռագիրը, վերնագրված «Մարդակազմություն և դեղագործություն», փոքրածավալ է՝ բաղկացած 44 թերթից։ Գրիչը Վ. Հ. Եղիշե Վրդ. Գաֆթանյանն է, գրչավայրը՝ Կ. Պոլիս, գրչության ժամանակը՝ 19-րդ դար։ Ձեռագրի թթ. 1-13ա մարդակազմություն է, որի լուսանքներում հանդիպում ենք նախագաղափար օրինակի էջահամարները։ Այն Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն»-ի խմբագրված ընդօրինակությունն է և ավարտվում է թ. 13բ-ում հետևյալ գրությունով՝ «իմաստութիւն տուողին Աստուած փառք յաւիտեանս ամէն։ Կատարիցաւ մարդակազմութիւն ի փառս Աստուծոյ։ Ամէն»։ Ձեռագրի թթ. 14ա-44ա դեղագործական տեղեկություններ են, բժշկական խառը հատվածներ, նաև բուժաղոթքներ՝ «աղօթք խոցի» (թ. 22բ) և այլն։ Այս հատվածում օգտագործված ոչ հայերեն բուսանունների, դեղագրերի մեջ դեղանյութերի անունների տառադարձությունը և ուղղագրությունը ուշագրության արժանի նյութ են 19-րդ դ. հայերենի, արաբերենի, պարսկերենի, թուրքերենի պատմական այդ փուլը քննելու համար և ներառելի են բժշկական բառապաշարի օգտագործման հետազիծը բացահայտող ուսումնասիրություններում։

Վիեն. 254 ձեռագիրն ընդգրկում է մարդակազմության վերաբերյալ բաժին և վերնագրված է «Բժշկարան եւ Մարդակազմութիւն» (17-18-րդ դդ.)։ Մատյանի բովանդակության մասին ավելին հայտնի չէ։ Այն շատ թերի է. պահպանվել է ընդամենը 14 թերթ։ Բժշկարանի բաժնում տարբեր հիվանդությունների և դրանց բուժման վերաբերյալ կցկտուր տեղեկություններ ենք տեսնում (թերի լինելու պատճառով)։ Երկրորդ՝ «Մարդակազմութիւն» բաժնի պահպանված թերթերից կարողանում ենք վերհանել հետևյալ ենթավերնագրերը. «Վասն ստեղծման լեզույն», «Վասն ստեղծման փազաբուշտին», «Վասն ստեղծման գլխոյն», «Վասն ստեղծման ականջաց», «Վասն ստեղծման ստամոքսին»։

Վիեն. 296 ձեռագրացուցակում վերնագրված է «Բժշկարան», մինչդեռ այն ժողովրդական բժշկարանի՝ հեքիմարանի⁶ նմուշ է։ Ձեռագրի կազմմանը մաս-

⁵ Այս ձեռագրի վերաբերյալ առաջիկայում զեկուցում կներկայացնի Վեներա Մակարյանը։

⁶ Հեքիմ < բրհ. ժողովրդական ձևից, հմմտ. արաբ., պարսկ., օսմ. *hakim*։ Արաբերեն ծագմամբ այս բառի հիմքում ընկած է h-k-m բաղաձայնական արմատը, ածանցված բառանւերի

նակցել են մի քանի գրիչներ, այսինքն, այն բժիշկները, որոնք օգտագործել են մատյանը, հավելումներ են արել՝ ելնելով սեփական բուժական փորձառությունից: Ձեռագրի էջերում գտնում ենք բժշկությամբ զբաղված հետևյալ անձանց անունները՝ բուն ձեռագրի գրիչը՝ «շոռոթցի Հայրապետի որդի Տէր Օհանէս» (1751), «Մահտեսի Անանիայի որդի Եղիեազար» (ինքն իրեն անվանում է «հեքիմ»), ցանկի գրիչը՝ «Ղազար Աղամալի որդի», «Մահտեսի Անանիա», «Բարումենց Մահտեսի Փիլիպոսի որդի Մկրտիչ» (1765 թ.): Այս ձեռագիրը ոչ գիտական բժշկական գործ է, և նրանում տեղ է գտել փորձառության վրա հիմնված կիրառական գիտելիքը: Ձեռագրում բազմաթիվ են ժողովրդական հմտության մասին գրությունները, օրինակ՝ «ձուլի եղն այսպէս հանէ», «թանաֆն այսպէս հանէ...» և այլն: Մատյանի առաջին հատվածում, որը կազմել է տեր Օհանէսը (նա իրեն այսպէս է բնորոշում. «միայն անուամբ եմ քահանայ և ոչ բարե գործ ունեմ»), հանդիպում ենք հղումներ հայտնի հին բժիշկների՝ Ճալիանոս (իմա՝ Գալենոս), Սինա (իմա՝ Իբն Սինա), ինչը վկայում է այն մասին, որ տեր Օհանէսը ծանոթ է եղել բժշկական գիտությունը՝ ի տարբերություն հաջորդ մասերի գրիչների: Լեզվական առումով այս ձեռագիրը բավական նյութ է պարունակում Շոռոթի կամ Զուղայի բարբառային բառապաշարի ուսումնասիրության

իմաստները առաջին հերթին կապված են «իշխել, կառավարել, դատել, դատապարտել» նշանակությամբ հետ. *hekmat*՝ «իմաստություն, փիլիսոփայություն, գիտակություն, շարի և բարոյ հանաչում», *hakim*՝ «իշխան, դատավոր, փիլիսոփա, իմաստուն»: Նշենք, որ բառն իսլամում Աստծո անուններից է և Դուրանում (45-րդ այս) ևս հիշատակվում է (**Zahra Qorbani Madvani**, “Tartīb-e asāmi-ye “azīz” va “hakīm”-e khudāvand bar mabnā-ye nazaryeshenākhtī-ye shekl v azamine”, *Pazhuheshnāme-ye mo‘āref-e Qorānī* 35, 1398/2019, pp. 16-99): Հետաքրքիր է, որ պարսկերենում, ինչպես և արաբերենում, «հաֆիմ» բառը վաղ շրջանում առաջին հերթին օգտագործվում էր «իմաստուն, փիլիսոփա» իմաստով. մասնավորապես՝ Ֆիրդուսին (10-րդ դ.) հայտնի էր *Հաքիմ Ֆերդոուսի* անունով, իսկ նրա «Շահնամե» պոեմում այս բառն օգտագործվում է միայն «իմաստուն» իմաստով (**Fritz Wolff**, *Glossar zu Firdosis Shahname*, Georg Olms Verlagsbuchhandlung Hildesheim, 1965, p. 309): Իմաստի լայնացումը տեղի ունեցավ աստիճանաբար և ավելի ուշ շրջանում բառը սկսեց կիրառվել իր առաջնային իմաստից բխող «բժիշկ» նշանակությամբ՝ օգտագործվելով արաբերենում, պարսկերենում, օսմաներենում, նաև հայերենում: 11-րդ դ. հեղինակ Աբուլֆազլ Բեյհադին «Բեյհադիի պատմությունը» երկում խոսում է, թե ինչպես է իմաստունը դեղանյութ պատրաստում, որն օգնում է մարմնական հիվանդություններին (گنجور «ابو الفضل بيهقي» «تاريخ بيهقي» «مجلد هفتم» «بخش ۲۵ - داستان بزرگمهر»): Նշենք, որ վերոնշյալ բոլոր լեզուներում վաղ արդի շրջանում բառն օգտագործվում էր իր մի քանի իմաստներով՝ «իշխան, դատավոր, ուսուցիչ, իմաստուն, նաև՝ բժիշկ»: Արաբերենը՝ *ṭabīb*, պարսկերենը՝ *ṭabīb* և *pezeshk* «բժիշկ» բառերին զուգահեռ օգտագործում էին նաև հեֆիմ բառը: Հայերենում այն առաջին հերթին նշանակել է «ժողովրդական բժիշկ», ինչն ամրագրվել է նաև ժամանակակից արևելահայերենում: Իսկ միջնադարյան հայերեն ձեռագրերում այս բառի կիրառությունը բավական ընդարձակ էր՝ օգտագործվել է թե՛ «ժողովրդական բժիշկ» և թե՛ «բժիշկ» նշանակությամբ, հմտ. նաև՝ *հեքիմարան* = բժշկարան:

համար, որի մեջ բարբառային, արաբերեն-պարսկերեն լեզվական տարրերի կողքին տեղ ունի նաև թուրքերեն լեզվանյութը:

Վիեն. 639 ձեռագիրը (1779 թ.) նույնպես հեքիմարանի օրինակ է, որի հեղինակը տիրացու Ստեփանն է. «Հեքիմարան: Այս է հեքիմարան գրեալ Հայոց բառ որ ի ներքոյ յայտնէ: Աշխատանօք հաւաքեցաւ միջո գրոց պատմականաց ի մատենից օրինակաց ի թվին Յիսուսի 1779 եւ Հայոց 1231. 10 օգս. ի վայելումն մեղաւոր անձինս իմոյ ամենեցուն ծառայ Ստեփան տրուպո իբրը տիրացու մականուամբ Մեհալանց, որդի Տէր Գրիգոր քահանայի հանգուցելոյ ի վանս սուրբ Աստուածածին խնդրակատար եւ գրեցի ի քաղաքն Սըչօվ ի ժամանակս Օվսէփ կայսերն լատինացոց, որ բազում վանօրեայս քակեաց ի հիմանց եւ զամենայն ինչս նոցին էառ, որ եկն ի Սըչօվ քաղաք եւ մեք եւս տեսինք զնայ. եւ մանաւանդ տեսողաց եւ ընթերցողաց արժանի արնէք յիշման զյետին ետնեալ վերայ գրեալ ծարայս եւ զամենեսեանդ յիշեսցէ Տէր Յիսուս ի փառս իւր. ամէն» (թ. 3ա):

Տեքստը ներառում է բազմազան խորհուրդներ, այդ թվում՝ կենցաղային բնույթի, օրինակ՝ «Վասն ծառ տնկելոյ», «Վասն գողի, որ այս կարդաց, դադարեց գողություն անել», «Գիր կախարդութեան որ չի մոտենայ քեզ այս է. Առ մէկ պօշ կաղին կամ փուճ, դիր մէջն» և այլն:

Հետաքրքրական է լեհահայ հեղինակ-գրչի՝ բնագիրն արաբերեն բազմաթիվ գրություններով հավելագրելու փաստը. հայերեն տեքստերի միջև գրված են բազմաթիվ հայատառ արաբերեն ախթարքներ, որոնք սկսվում են հետևյալ՝ «որ ասիս ...», արտահայտությամբ, ապա շարունակվում է հայատառ արաբերեն ախթարքը:

Ձեռագիրը հարուստ է մի շարք հետազայի հիշատակարաններով, որոնք ընդգրկում են պատմական իրադարձությունների, մահվան, ձեռագրի հեղինակի կենսագրության վերաբերյալ տեղեկություններ և մեկ համառոտ տոհմագրություն:

Վիեն. 637 ձեռագիրը (19-րդ դ.), որը վերնագրված է «Ամփոփոյք դեղերու եւ գիւտերու», գրքույկ-տետրակ է (59 էջ) գրված սև և կապույտ թանաքներով և երկու տարբեր ձեռքերով (անհայտ): Այն, սեփական փորձի և գործունեության հիման վրա շարադրված, առօրյա կիրառական բժշկարան է: Ընդգրկում է նաև կենցաղային տարբեր իրավիճակների համար խորհուրդներ՝ «Երկաթը հալեցնել», «Գլխու մազը շատցնել», «Բժշկական գիւտք, երեսին գոյնը գեղեցիկ եւ պայծառ ցուցնել» և այլն: 10ա-11բ թերթերին գրված են հայատառ թուրքերեն դեղագրեր:

Վիեն. 658 ձեռագիրը հունահռոմեական, իսլամական, ինչպես նաև հայ միջնադարյան նշանավոր բժիշկների աշխատություններից յուրօրինակ ծաղկաքաղ բանաքաղություն է: Այն վերնագրված է «Բժշկարան», գրվել է Կ. Պոլսում 1769 թ.: Ձեռագրի գրիչ-հեղինակը և սեփականատերը Հովհաննես Կարնեցին է, որն իր անունը հիշատակում է ձեռագրի տարբեր էջերում. (թ. 2ա) «Ով ընթերցողք քրիստոնեայք այս խրատս ունկնդիր լերուք. եւ հանճողք ամէն, ամէն բան. ճանաչումն հիւանդին եւ ի դեղերունքն, որ ոչ անմեղայցիք լինիք. եւ իշէք զյետնեցեալ գրչիս Կարնեցի. բժիշկքս Յօհաննէսս եւ դուք իշեցեալ լիցիք ի Աստուծոյ», (թ. 19ա, թղթի վրա գրված) «...Կարնեցիս Յօհաննէս բժիշքս կամեցայ զնտիրս եւ հաւաքել զհամառօտսն բացայայտնեալ ըստ կայրեացս մերում փոքր ի շատէ ի բանից իմաստասիրաց...»:

Թ. 29ա-ում Մխիթար Հերացուն մեջբերելուց հետո Հովհաննես Կարնեցին գրում է. «Ապայ ով եղբարք յօրինակն խիստ պակասարան էր եւ սխալած եւ հազիւ կարացայք այսչափ ստուգութիւն ածել եւ որք յօգտիք ի սմանէ յիշեսցիք զգծողս սորայ եւ իշեալ լինիք Աստուծոյ: Այլ զյետի գծողս մեղսայգրչիս Յովհաննէս, որ է Պետրոսի որդի եւ իմ որդիքս Պետրոս եւ Պօղոս ա հայր մեղախ իշէք եւ դուք իշեալ լիցիք առաջի Աստուծոյ, ամէն»:

Սակայն, Հովհաննես Կարնեցու այս բժշկարանում միայն անվանի բժշկագետներից մեջբերումներ կամ տարբեր հիվանդությունների բուժման միջոցներ և հրահանգներ չեն տրված: Գրիչ-հեղինակը ներկայացնում է նաև դեղամիջոցներ տարբեր հիվանդությունների բուժման համար, որոնք անձամբ է պատրաստել՝ հատուկ մարդկանց համար, որոնց անունները նշել է: Այսպես, աշխատության 19-րդ մասը (թ. 217ա) վերնագրված է «Վասն սաֆուայի»⁷ եւ պաղլամին⁸ որ քակէ Ինճիճի Գէորքին եւ թարքիպն է Աստուածով փորցիք...»: Կամ՝ (թ. 260բ) «Այս թարքիպս Հասան պեկին խագնտրին Յահմատ աղային է»:

Առհասարակ, ինչպես նաև Հովհաննես Կարնեցու դեպքում, փոքր բնակավայրերի բժիշկները, որոնք զբաղվում էին միայն գործնական բժշկությամբ, իրենց իսկ կազմած ծաղկաքաղ գործերում կատարում էին հավելագրություններ. ավելացվում էին դեղատոմսեր, աղոթքներ և հմայագրեր և արդեն իսկ եղած նյութը հարստացնում սեփական փորձով: Նման բժշկարանները հիմնա-

⁷ Հմմտ. արաբ. şofār, պրսկ. šafra, քուրմ. safra «մաղձ»:

⁸ Հմմտ. արաբ. պրսկ. balqam, քուրմ. balgam «խուլի, խորխ, մաղաս»:

կանում մնում էին որպես տվյալ բժշկի ընտանիքի սեփականություն և փոխանցվում սերնդեսերունդ՝ չկորցնելով իրենց նշանակությունը⁹:

Ահա այս երևույթը լավագույնս տեսնում ենք Հովհաննես Կարնեցու Բժշկարանի պարագայում. ձեռագրի գրչության հիշատակարանի վերջում բժիշկն այն «ժառանգում է» իր որդիներին՝ Պետրոսին և Պողոսին, փաստացի իր ընտանիքին թողնելով ամենօրյա պրակտիկ բժշկության վերաբերյալ սեփական փորձված դեղամիջոցներով մի գիրք, որը ներընտանեկան օգտագործումից զատ, կարող էր նաև որպես (բժշկության) արհեստ ծառայել իր որդիներին. (Թ. 262ա) «... եւ այս հեքմարներս հին էր եւ այլ տեղէ գտայ, շատ ջաֆայհի¹⁰ ամէն այլ... նորոգեցի ու շտափօք գրեցի (ջնջուած) սաֆարն¹¹ էր, նեղ ժամանակ էր եւ թվ ՌՄԺԸին ինէ գրվեցաւ, իմ անցման եւ տղոցս, ով որ գործածէ պարտական լինի, որ զմեզ չի իշատակէ Աստուծոյ յօթեվան դուք իշատայկիք»:

Վիեն. 540¹² ձեռագիրը 17-րդ դ. ամասիացի բժիշկ Գալուստի գործն է, որը հայ բժշկագիտության պատմության մեջ առանձին ուսումնասիրության արժանի հեղինակ է: Ձեռագիր մատյանը զարդանկարներ չունի, ինքնագիր է՝ 1669 թ., գրչության վայրը՝ Կ. Պոլիս: Բաղկացած է 600 էջից, 150 գլխից և հետևյալ բաժիններից՝ մարդկազմություն, ակտաբանություն և առողջապահություն, դեղագործություն կամ «դեղագրաց գումարություն», բժշկական բառարան, ընդհանուր գիտելիք բժշկության, ակտաբանություն կամ դեղագործության նախաշավիղ: Թ. 75ա-ում Գալուստ Ամասիացին գրում է. «Ծանիր ո՛վ բժիշկ, մի՛ մեղադրեր թէ էր շատ դեղ ես ասեր, չեմ գիտեր թէ որն այնեմ. վասն այս շատ ասացաք որ պազի¹³ փոքր խիլաֆ¹⁴ յերկիր կու անկանիս եւ այս դեղրանքս չի գտվիր. թէ որն որ գտվի զայն կանես. վասն ես քաշեցի այս հոգս բազում երկիր վասն դեղի վասն այն ժողովեցի ի Լստանպօլ քաղաքն ի գրոց եւ փորձեցի, որ նոքայ ամէնս որ գրեր եմ՝ ըստոյգ է եւ զարմանալի...»: Բժշկարանում, ինչպես նշում է Ամասիացին, հավաքել է մինչ այդ հայտնի բժշկական գիտելիքը, բայց շեշտադրել, որ ինքն էլ փորձարկել է և իր փորձի արդյունքներն էլ գրի առել մատյանում: Գալուստ Ամասիացու թողած այս գրառումները թույլ են տալիս նկատելու նրա սեփական բժշկական գիտելիքի արտացոլումը աշխատանքում: Ամասիացու

⁹ Վենեռա Մակարյան, «Բժշկաբանների գրուքյան և կիրառման նպատակները իսլամական բժշկագիտության և Մատենադարանի արաբերեն ձեռագրերի օրինակով», Վէմ համահայկական հանդես, 1, հունվար-մարտ, 2023, էջ 220-230:

¹⁰ Հմմտ. արաբ. /պրսկ. javāhīr «գոհարեղեն»:

¹¹ Սաֆար – լուսնային տարվա երկրորդ ամիսը:

¹² Ղետնդ Յովնանեան, նշվ. աշխ., էջ 468-482:

¹³ Հմմտ. պրսկ. ba‘zī «որոշ»:

¹⁴ Հմմտ. արաբ. /պրսկ. /pəurʔ xa/elāf «ոչ ճիշտ, սուտ, ոչ հարմար, անհամապատասխան»:

կյանքի և գործունեություն մասին տեղեկությունները ևս քաղում ենք այս ձեռագրի առանձին էջերում թողած հիշատակագրություններից. իր իսկ վկայությունամբ բժշկությամբ սկսել է զբաղվել 1669 թ.: Իր գրություններում նա հիշատակում է այն բնակավայրերը, որտեղ զբաղվել է բժշկությամբ, ինչից կարելի է եզրակացնել, որ նա կյանքի մեծ մասն անցկացրել է Կ. Պոլսում, եղել է Սեբաստիայում, Դիարբեքիրում (Տիգրանակերտ), Մարաշում, Այնթափում, Ադանայում, Հալեպում, Կեսարիայում, Սամսոնում, Բաղդատում, Վանում: Ինչպես ինքն է նշում. «ԹՃԺԸ սկսայ բժշկութեան, մինչ երեք հազար զրուշ աղէկութիւն արարին խիստ եւ խիստ, իբրեւ սուրբ պաշտեցին, ձիով, գիաֆէթ¹⁵, փէշկէշ¹⁶, եւ զիս իբրեւ Փալիանոսն եւ Բագարատն¹⁷ ընդունեցան: Աստուած ողորմի վարպետաց հոգոյն՝ որ այս արհեստս ուսայ, հոգոյ եւ մարմնոյ պիտանացու է եւ լինի Աստուծով. ամէն»: Հայտնի է նաև Փալուստ Ամասիացու ձեռագրի համառոտ տարբերակը, որը նույնպես պահվում է Վիեննայում, հմր. 554: Վերջինս ընդգրկում է «Ախտաբանություն եւ Առողջապահություն եւ Դեղագործություն», «Անուանք ցաւոց. Խուլք¹⁸ որ է խենազիրն», «Գիտելիք բժշկականք», «Ախրապատնէ մասեր», «Մարդակազմություն (վերջից թերի)» բաժինները:

Վիեն. 799 – ձեռագրացուցակում վերնագրված է «Արուեստաբանություն և բժշկարան»: Գրություն ժամանակը 18-19-րդ դդ., ունի կնիք, որ պատկանում է ոմն Կարապետ աւագ քահանայ Բուսճուզին, որ գնել է գիրքը Ստեփան Տէրտէրեան Բուսճուզից՝ 12 դեկտ. 1900 թ.: Մատյանն ընդամենը 23 թերթից է բաղկացած, սակայն ուշագրավ բովանդակություն և կառուցվածք ունի: Մասնավորապես առաջին հատվածը կոչվում է «Արուեստաբանութ» (թթ. 1ա – 7բ) և պարունակում է խորհուրդներ բույսերի պատվաստումների, կանաչ, կարմիր, դեղին վարդ ստանալու, ծառի խոցը բժշկելու, հողը պարարտացնելու, պարտեզը վնասկար միջատներից մաքրելու, գարնանը ծառերը խնամելու մասին: Հանդիպում են խորհուրդներ «ինկլիզի» իմա՝ անգլիական, ձևով հաց թխելու, մեղրը շաքարի փոխարեն գործածելու, թանաքի և կերակուրի հետքերը հագուստի վրայից հանելու, ոսկին մաքրելու և փայլեցնելու, փայտը տարբեր գույներով ներկելու և այլ հմտությունների մասին: 9ա թերթից սկսվում են բուժական խորհուրդները, օրինակ՝ ատամնացավի, ատամները ամրացնելու, դեղնցավի, գլուխը ուռելու և այլնի մասին: Այս ձեռագրի կարևոր առանձնահատկությունն այն

¹⁵ Հմմտ. արաբ. /պրսկ/թուրք. ziyāfat «նաշկերույթ, խնշույք»:

¹⁶ Հմմտ. պրսկ. /թուրք. pīshkesh «նվեր, պարգև»:

¹⁷ Հայերեն միջնադարյան բժշկական ձեռագրերում Հիպոկրատեսի անվան արաբականացված ձևը:

¹⁸ Պալար, որն առաջանում է պարսնոցի վրա և երբեմն թարախակալում է (scrofula), հմմտ. պրսկ. khenāzīr.

է, որ խորհուրդների հիմնական լսարանը բժշկի դիմելու միջոցներից զուրկ բնակչությունն էր: Ձեռագիրը գրված է ժողովրդախոսակցական լեզվով, իսկ նշված միջոցները հասանելի են: Դրանք «փորձված» կենցաղային և բժշկական խորհուրդներ են: Այս ձեռագիրը 19-րդ դ. մեծ տարածում գտած «հասարակաց» բժշկարանի օրինակ է, որոնք նաև ուսերենից, ֆրանսերենից կամ իտալերենից թարգմանական գործեր էին, նաև տպագրված¹⁹: 19-րդ դ. Թիֆլիսի Հայ Հրատարակչական ընկերությունը սկսել էր «Ժողովրդական լեզուով առողջապահական և բնագիտական գրառւմներ»-ի շարք²⁰:

Վիեն. 898 ձեռագիրը «Գիրք դեղորէից» (1839 թ.) վերնագրով ծաղկաքաղ բժշկարան է: Գրիչը՝ Հովհաննես Շուքուրյանը, Արգվինում (թ. 1ա) «Օրինակեալ ի գերապայծառ առաջնորդէն Սերվեան Յովհաննէս ծայրագոյն վարդապետի, օրինակեալ գրոյն ի պէսպէս բժշկաց տեղեկալեալ իրաց: ... Յաւելեալ ինչ ինչ յայլոց հաւաքեալ եւ ի փորձառութենէ ընտիր ընտիր բժշկաց»: Ձեռագիրն ունի հետագայում գրված բազմաթիվ դեղատոմսեր՝ «Աչքի ցաւին», «Երախով գինով-ցած սաստիկ հիւանդոլին» և այլն: Իսկ թ. 5ա «Մարդու ամորձիկն որ կու քերվի...» ախտանշի բուժման համար բուժում գրելուց հետո, նշվում է, որ «փորձված դեղ է, ի Սիլվեան վարդապետէ ուսեալ: 1840, Յուլիս 12»:

Վիեն. 1008 ձեռագիրը վերնագրված է «Բժշկարան», բաղկացած է 115 էջից, գրիչն ու գրչության վայրը հայտնի չեն, իսկ գրչության ժամանակը ենթադրվում է 19-րդ դ.: Այս մատյանը կիրառական բժշկարանի օրինակ է համակարգված կառուցվածքով: Մասնավորապես՝ թթ. 2ա-5բ առաջարկվող դեղերի ցանկն է, որոնք դասավորված են ըստ ցավերի անունների այբբենական կարգի, մասնավորապես՝ «ականջի ցավի դեղեր», «աչաց դեղեր», «այտուցի դեղեր», «ատամնացաւի դեղեր», «բերանացաւի դեղեր», «բորի դեղեր գոյնզգոյն», «գլխացաւի դեղեր», «գոգի դեղեր», «գոթեցածի դեղեր», «դեղնութեան որ է եարաղան»²¹, «գողալ ձեռաց», և այլն: Վերջինը կոչվում է «Ֆռանկի դեղեր» և «հապեր» (թ. 91բ): Թթ. 112ա-բ հետևյալ հիշատակագրությունն է. «Աստուած լուսաւօրէ իմ հօ[ր]ըն հօգուն. թվին ՌՃՂԷ.-ին (1748), փետրվարի ԻԱ.-ին (21),

¹⁹ Օրինակ՝ Առձեռն բժշկարան ի պէտս գիւղականաց կամ Բժշկական խրատք վասն արքունի գիւղականաց, տպ. Յ. և Դ. Արզանեանց, Թիֆլիս, 1843, լոյս ածեալ Անդրկովկասեան Միաբանութենէ Ազարակային Տնտեսութեան: Թարգմանութիւն *Сельский домашний лечебник, или Врачебные наставления для государственных крестьян* գրքից, նոյն միաբանութեան Ի ներգործական անդամոյ **Յ. Արզանեանց, Քօչարեան Կարապետ**, Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան, տպ. Գ. Մելիումեանց և Հ. Էնֆիանեանց, Տիֆլիս, 1863:

²⁰ **Աւետիք Բաբայեանց**, Կրքեր եւ նոցա ազդեցութիւնը առողջութեան վրայ, տպ. Հ. Էնֆիանեանց, Թիֆլիս, 1880, էջ Բ:

²¹ Հմմտ. պրսկ. *yargān* «դեղնախտ»:

որ էր Բուն բարեկենդան, որ առի անդրանկութեանն օրհնէքըն, եւ հրամայեաց ինձ թողուլ մօրուսն իմ: Եւ ես <եւ ես> ԻՔ. (29) ամաց, եւ էտ Լ. (30) աւուր ինքըն գնաց առ կօշօղն (իմա՝ Աստուած): Ամենէցուն Աստուած լուսաւօրէ իւր հօգին, դատաստանըն քաղցր անէ, գապրելական փօղուն, անթառամ պսակաց արժանի անէ, Աստուած իւր անցանքըն ջի յիշէ. ամէն: Մարգի ԻԲ.-ին (22) մեռաւ, օրն՝ Գ. շափտի, մէջօրեւի, այսպէս մելում (՞) լինի»:

Վիեն. 1074 ձեռագիրը վերնագրված է «Բժշկարան ընդարձակագոյն»։ Գրիչը Յովհ. վարդապետ Յարութիւնեանն է, որը ձեռագիրը գրել է Բաղդադում իր պանդխտության ժամանակ՝ 1813 թ.։ Ձեռագիրը 17-րդ դ. ֆրանսիացի հեղինակ Լազար Ռիվիերի (Lazare Rivière), որը եղել է Կուրդիկոս XIII-ի անձնական բժիշկը, հանրագիտարանային բնույթի ընդարձակ աշխատանքի թարգմանությունն է հայերեն և, ինչպես նշում է Յովհաննէս վարդապետը. «... այժմ աշխատեցաք ի յօրինել զճոխագոյն եւ առաւել լայն եւ ընդարձակ բժշկարանս զայս, առաջնորդութեամբ արքայական գաղեացի հռչակ բժշկապետին Ղազարոսի Ռիվիերիոսին եւ ուրանօր եւս ոչ անփոյթ արարաք զառաջնորդութենէն գերհամբաւ Գոլիէլմոս Բուքան Անկղեացի բժշկին, զորոյ բազում խրատս եւ նորագիւտ փորձառութիւնս ընդ իմ աւելի քան զքառասանամեայ փորձսն սեպհականեալ ըստ պատշաճի իրացն ընձեռացաք յօժարամիտ ուսումնասիրաց...»։ Ձեռագրի վերջին թերթին (196ա) կարդում ենք. «Յանկ երեւելի իրացն մատենիս, որք պարունակին յերկու հատորս. առաջին թիւն ցուցանէ զհատորն, իսկ երկրորդն գէշս թղթոցն...»։ Այս գրությունից պարզ է, որ վարդապետը կազմել է երկհատոր աշխատություն։ Այս ձեռագրի հետագա ուսումնասիրությունը կարող է լույս սփռել այն հարցի վրա, արդյո՞ք Ռիվիերի մեկ գործի, թե մի քանի գործերի բանաբաղությունն է այս աշխատանքը և հայ վարդապետը գիրքը թարգմանել է լատիներեն սկզբնագրից, թե՞ արդեն այդ շրջանում գոյություն ունեցող անգլերեն կամ ֆրանսերեն թարգմանություններից։

Նույն հեղինակի գործն է նաև Մխիթարյան մատենադարանում պահվող մեկ այլ ձեռագիր՝ **Վիեն. 1071**, վերնագրված «Ընտանի բժշկականութիւն»։ Այս ձեռագիրը ևս շատ կարևոր է՝ ուսումնասիրելու համար, թե ինչպես է 19-րդ դ. եվրոպական բժշկների գիտելիքը թարգմանաբար մուտք գործել հայկական միջավայր։ Ձեռագիրը Հովհաննէս վարդապետ Հարությունյանը կամ Զուղայեցին գրել է 1819-1820 թթ. Բաղդադում։ Հիշատակարանում նա գրում է (թ. Յա). «Մատեանս է «ընտանի Բժշկականութիւն» կամ ճառ կատարեալ սոսկ միջակաց պահելոյ գանձն ի յողջութեան, արգելոյ և բժշկելոյ զախտս։ Օգտակար մատեան

եւ յարմարեալ իմացութեան իւրաքանչիւր ուրուք: Գուլիէլմոս Բուքանին²² բժշկին Անկղիաացւոյն արքայական Համալսարանին բժշկականութեան էդիմբուրգոյ. թարգմանեալ ի յԱնկղիաացւոց լեզուէ եւ փարթամացուցեալ յոլով յաւելուածովք եւ վերծանութեամբ ի պարոն Դուփլանիլ բժշկէն համալսարանին Մօնփէլլիէրին...»: Այս կարևոր տեղեկությունից բացի Հովհաննես վարդապետը նաև կարևոր մտահոգություն ունի իր աշխատանքի կազմման և լսարանի մասին (թ. 3բ): Նա արձանագրում է, որ թարգմանությունը սկսելիս ինքը մտահոգվել է, որ հայ ազգը սփռված է ամենուր և այն հատվածը, որ Հայաստանում և «ի Պարսիկս» է բնակվում, դեղերի և հիվանդությունների պարսկերեն անուններ է օգտագործում: Այն հայերը «որք յԱրաբստան են», խոսում են արաբերեն, «որք յՕսմանցւոց տէրութեանն են», օսմաներեն անունները գիտեն, իսկ այն հատվածը, որ «Հնդկաց կամ յԵւրոպացւոց երկիրս են, Եվրոպացւոց անուամբ կոչել սովորք են»: Այս խնդիրը լուծելու համար նա որոշում է իր աշխատանքները շարադրել պարզ ոճով, իսկ դեղերի և հիվանդությունների համար օգտագործել դրանց հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն տարբերակները: Հետաքրքիր է, որ հայ վարդապետը նաև խմբագրական աշխատանք է կատարել և նշել. «...բազում ինչս, որք պատկանին Եւրոպացւոց եւ ոչ վայելեն Արեւելեայքն, ի բաց թողի եւ ինչ սակաւ յաւելի յինէն ըստ այսքան փորձառութեանս, զորս փակագծիւ նշանակեցի»:

Այս ձեռագիրը թերևս լավագույն օրինակ կարող է ծառայել հայկական բժշկագիտական թարգմանական աշխատությունների մասին պատկերացում կազմելու համար. այն առանձնանում է ոչ միայն որպես օտար բժշկագիտական ամբողջական սակավաթիվ թարգմանական աշխատություն, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, այլ նաև որպես խմբագրված թարգմանության կամ կիրառական գիտելիքի հարմարեցման լավագույն օրինակ: Այնինչ հատվածաբար թարգմանական մեջբերումներ առկա են գրեթե բոլոր հայերեն բժշկագիտական ձեռագիր աշխատություններում:

Հովհաննես վարդապետ Հարությունյանի հեղինակած և գրչագրած երկու ձեռագրում էլ կա այս գրությունը. «Նուեր գերապայծառ Մկրտիչ Եպիսկոպոսի Աբգարեանց Առաջնորդի Իրանահայ կաթողիկեայ թեմին ընծայեալ Արհիպատիւ Տն. Մեսրոպայ Հապոգեան արքեպիսկոպոսի և Ընդհր. աբբայի Մխիթարեան Միաբանութեան ի Վիեննա ի 16 նոյեմբերի 1957 ի Թեհերան, ընկալայ ի պահպանութիւն ի Մատենադարանիս ի 25 դեկտ. 1957 (2բ)», ինչը լույս է սփռում

²² Վիլիամ Բուֆան (1729-1805) – շոտլանդացի բժիշկ և գրող, որի «Տնային կամ ընտանեկան բժշկություն» գործը եղել է եվրոպական ամենահայտնի թերապևտիկ գործերից մեկը և քարզմանվել է եվրոպական բազմաթիվ լեզուներով:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանում ձեռագրերի հայտնվելու հարցի վրա:

Վիեն. 1582 – «Մուֆրատաթ²³, Հէքիմարան, Բժշկարան» (1770 թ.), գրիչն է դպիր Ստեփան Բժիշկ Ամթեցին (Հիշատակարան, թ. 20ա), կազմողը՝ Հ. Ներսես Ակինյանը, որի գրչով ծանոթագրություն կա Ա կազմաստառին. «Ձձեռագիրս, որ կարի խառնակեալ եհաս ի ձեռս մեր, ածի ի կարգ եւ կազմեցի: Հ. Ներսէս, 1914 Ապրիլ 9. Վիեննա»:

Թեև ձեռագիրը սկզբից պահպանվոր է, սակայն հիմնական բովանդակությունը պահպանված է. սկսվում է (թթ. 1բ-7բ) հետևյալ գլուխներով՝ «Շարապներ», «Շախուներ», «Պէխուտ անելու, Աչացաւի», «Ականջացաւի, Ատամնացաւի», «Նդերն, Քոի, Փանգահը, Հուքամայ», «Հէքիմի աղ, Եղ սղույի, Եղ գովելի, Եղ խոստկի, Խոստուկի, Ֆարֆիոնի», «Մուրապաներն», «Կուլպա շաքարն, Լիմօն շարապի»:

Ապա սկսվում է մյուս բաժինը՝ «Մուֆրատաթ, որ ամենայն դեղերուն խան[ս]խաթն²⁴ եւ որպիսութիւնն պայեան կ'անէ» (թթ. 8ա-20ա), որտեղ ներկայացնում է պարզ դեղամիջոցներ, խառը դասավորություններ: Դեղանունը նշելուց հետո գրում է, թե որ ցավին կամ հիվանդությանն է օգնում, ապա նկարագրում է դեղամիջոցը և նրա հատկությունները:

Բաժնի ավարտում բժիշկ-հեղինակը այբբենական կարգով (մինչև «Ձ» տառը) ներկայացնում է այն դեղամիջոցների ցուցակը, որոնք դժվար կամ անհնար է եղել հայթայթել, սակայն հայ բժշկապետերը դրանք փոխարինել են տեղական համարժեքներով (բնորոշ հատկանիշ բժշկարանների համար): Այս փաստը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ տվյալ բժշկարանը ևս թարգմանական և խմբագրական բնույթի աշխատություն է. այնուամենայնիվ, հեղինակ-գրիչը չի հստակեցնում, թե որ բժիշկապետերի աշխատությունների հիման վրա է կազմել այն:

Ձեռագրի «Հէքիմարան եւ բժշկարան մուխթասըլ[ը]²⁵» (թթ. 22ա-33ա) ենթավերնագրի ներքո առանձին գլուխներով ներկայացված են հետևյալ հիվան-

²³ Բառի հիմքում արաբ. *mufрад* «եզակի, միակ» բառն է, որի հոգն. *mufрадāt* ձևը միջնադարյան բժշկագիտության մեջ ձեռք է բերել եզրույթի նշանակություն և անվանում է այն դեղագրքերը, որոնք պարունակում են պարզ դեղամիջոցներ, մասնավորապես՝ բուսական, կենդանական, հանգստի ծագման: Այս անվանումը օգտագործվել է առաջին հերթին արաբապարսկական բժշկագիտության մեջ և մտել նաև հայկական միջնադարյան բժշկություն:

²⁴ Հմմտ.՝ արաբ. /պրսկ. /թուրք. *khāṣṣiyya* – հատկանիշ, առանձնահատկություն, հատկություն:

²⁵ Հմմտ. արաբ. /պրսկ. /թուրք. *mukhtaşar*– 1. կրճատված, համառոտ, կարճ, 2. կոնսպեկտիվ, համառոտ ներկայացված:

դուխտուններն ու դրանց բուժումները՝ «Գլխացաւի», «Աչաց», «Յղանալոյ», «Կնոջ կաթե», «Փորացաւի», «Ջէրման», «Ճիճուի» և այլն:

Վերջին՝ «Հէքիմիայան մուխթասըլ[ը] ամենայն ցաւոց դեղ կարգաւ» բաժնի յուրաքանչյուր գլուխ սկսվում է. «մարդ որ գլուխն ցաւի, դեղն այս է...»:

Այս բժշկարանը առանձնանում է իր լեզվական բազմաշերտությամբ. դեղամիջոցների անվանումներից բացի, որոնք միջնադարում սովորաբար փոխանցվել են արաբերենից կամ պարսկերենից, այստեղ նկատվում է նաև արաբերենի, պարսկերենի և թուրքերենի լայն բառապաշարի ու բառաձևերի գործածություն: Այս բազմազանությունը վկայում է ինչպես միջնադարյան բժշկական բառապաշարի բազմալեզու բնույթի, այնպես էլ տվյալ բժշկարանի կազմման ընթացքում տարբեր լեզվամշակութային շերտերի ներգրավվածության մասին:

Վիեն. 1857 ձեռագիրը (18-րդ դ.) Վիեննայի մատենադարանի հայերեն ձեռագրացուցակում վերնագրված է «Դեղագիրներու հաւաքածոյ, մասնարան-ձանարան»: Այս վերնագիրը, կարծում ենք, նկարագրական բնույթ ունի և հետագայում է ավելացվել (?): Իսկ ձեռագիրը իսլամական բժշկագիտության կարևոր ներկայացուցիչ՝ փիլիսոփա, բժիշկ, բնագետ Աբու Բաքր Մուհամմադ իբն Ջաքարիա ալ-Ռազիին (854-925) գործերից է՝ թարգմանված հայերեն: Պետք է շեշտադրել, որ այս ձեռագիրը արաբերեն գրված բժշկական երկի հայերեն ամբողջական թարգմանության եզակի օրինակներից է, որի գաղափար օրինակի հարցը դեռևս բաց է. հայտնի չէ՝ արդյո՞ք բնօրինակ լեզվից, թե՞ պարսկերեն կամ թուրքերեն թարգմանված տարբերակից է արված հայերեն փոխադրությունը: Ջաքարիա Ռազին աշխատության սկզբում գրել է մի նախապատմություն, որը նույնպես թարգմանված է հայերեն՝ թարգմանչի որոշ միջամտություններով. «...եւ զայս գիրքս Մէհմէտ Ջաքարիային որդին թարգմանել է որ Աւել Նաղապն նուազի²⁶ կ'ասեն: Աւուր միտւմ վէզիր Խազումն Ապալէ որդին²⁷, որ բազում բժիշկ էր ժողովեալ, եւ ես ալ զհետ նոցա գնացի եւ վէզիրն հէքիմութիւն հարցաւ եւ դասք մի հէքիմք կային ի տիւանն, ամենայն ոք իւր իմաստութեամբն պատասխանի ետուն: Ոմանք ասացին թէ ցաւն օրով եւ ամսով տալ պիտի որ մուտ անէ ցօին, եւ այլք ասացին այսպես, թէ ըստ ազահուլթեան հաքիմնուն զայն կ'անեն, որ զցաւն յերկար առնեն զի իւր բանի տեղ լինի: Եվ ես այս-

²⁶ Մուհամմադ Ջաֆարիա Ռազիին այստեղ հայ գրիչ-թարգմանիչը անվանում է նաև «Աւել Նաղապն նուազի», որ թարգմանաբար կարող է նշանակել «Գաղտնիքների առաջին բացահայտողը»:

²⁷ Խազումն Ապալէ որդի - Ղասեմ էբն Աբդուլլահ Խաղանի՝ Բաղդադի Աբբասյան խալիֆ ալ-Մուֆթաֆի Բիալլահի (902-908) վեզիրը, որի համար Ջաֆարիա Ռազին գրել է այս երկը:

պէս խաւսեցայ եւ ասացի. Վեզիր, թէպէտ արող եւ ամսով կու ընծաի ցաւն, կարէ իմաստուն բժիշկն ի մէկ սհաթն լաւցնել, ընդ որ յոյժ վարմացան բժիշկքն այս բանիս: Եվ վէզիրն հարցաւ ցիս թէ այն որ ցաւէ որ Ա ժամն կու լօնա: Եւ ես գնացի ի տուն եւ զայս թարքմանեցի եւ բերի այս որ անունն դրի Ալլըֆի, որ Հայքս կոչեն մի ժամ հանող, զի ամենայն ցօ ի Ա սհաթն կու բժշկի: Եւ սոքա են զոր գրեցի. Թէ գլուխն ցաւի ճակատովն եւ կտոր մի աֆիոն ի քիթն ի վեր կալու...»:

Այս ձեռագիրը Զաքարիա Ռազիի «Բուժում մեկ ժամում» (արաբ. *برؤ الساعة / Būr' al-sā'ah*) վերնագրով գրքի հայերեն թարգմանությունն է, որը թարգմանիչ գրիչ-բժիշկը կոչել է «Ալլըֆի (*اَلْاَلْفِيَّة* / *al-Alifīyya* / Ալ- Ալիֆիյա (արաբերեն այբուբենի առաջին տառը))», «որ Հայքս կոչեն մի ժամ հանող, զի ամենայն ցօ ի Ա սհաթն կու բժշկի»: Զաքարիա Ռազիի աշխատությունը բաղկացած է 23 գլխից և վերաբերում է մարմնի բոլոր անդամների այն հիվանդություններին, որոնք, ինչպես նա է պնդում, հնարավոր է բուժել ընդամենը մեկ ժամում: Դրանց թվում են գլխացավը, ատամնացավը, ականջացավը, փորկապությունը, քորը, վերջույթների թմրածության հետևանքով զգացողության կորուստը, մկանային ցավերը: Այս գիրքը Զաքարիա Ռազիի գրել է բարձր դասի մարդկանց հիվանդությունները բժշկելու համար:

Ձեռագրի լեզուն շատ խրթին է՝ արաբերեն, պարսկերեն, թուրքերեն բառաշերտերով աչքի ընկնող: Ձեռագրի թթ. Չա-Ճա գրված են հայատառ արաբերեն ախթարքներ ու աղոթքներ չար աչքից և չար ոգուց պաշտպանելու համար:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի հայերեն ձեռագրերի արժեքավոր խումբ են կազմում նաև քիմիային կամ ալքիմիային վերաբերող ձեռագրերը՝ թե՛ որպես ամբողջական ձեռագրեր, թե՛ բժշկական ձեռագրերի բաժին կազմելով: Ստորև ներկայացնում ենք դրանք:

Վիեն. 776 ձեռագիրը (1844 թ.) քիմիայի վերաբերյալ թարգմանական բանաքաղություն է: Հեղինակ-գրիչն այն վերնագրել է «Գիտութիւն քիմիական թարգմանեալ ի Յովհաննու Սիրնոսեան փիլիսոփայի Ուլնեցւոյ ի գալլիական եւ յիտալական է եւ այլոց» (թ. Չա): Ձեռագրի բովանդակությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ հայտնի գործերի թարգմանություններ, որոնք են. «... Գիրքս այս որ կայ ինքն Խալետի պատմութիւնն, որ պատուիրեաց իւր որդւոյն զի պատուէրք այս պահեալ էր», «Խրատ Զիպեո փիլիսոփայի. Սկիզբն գրոց արեգական եւ լուսնի, զոր հրեշտակքն եցոյց Ադամայ հրամանաւն Աստուծոյ եւ ես Զիպեոս հանի զայս գիրքս ի գրոց իմաստասիրաց եւ գոհացայ զԱստուծոյ», «Խրատ Ստեփաննոս փիլիսոփայի», «Արդ կոչեացեալ է սա գիտու-

թիւն քիմիական թարգմանեալ ի Յովհաննու Սիրնոսեան փիլիսոփայի Ուլնեցուց ի գալիլիականէ եւ յիտալականէ եւ այլոց», «Բանք իմաստասիրականք Ուլրիֆոս Ֆուլճիր գիտնական փիլիսոփայի: Սա եղեւ գործակալ մեծի Թէոփրաստայ պապին», «Բանք Արդեֆգոսի. Գիրք եւ յայտնութիւն գաղտնի սքանչելեաց բնութեան արարեալ ի գերազանց իմաստնոյն Արդեֆոսի ի լատին բարբառ, թարգմանեալ Յովհաննու Սերնոսեան փիլիսոփայէ ի հայկական լեզու...», «Ասացուած վասն սնտիկին եւ փիլիսոփայական քարին ի Մորճիր փիլիսոփայէ առ որդին իւր: Սիրելի որդեակ իմ, ուսուցից քեզ զայս ցանկալի գիտութիւնս, որ ծածկեալ եղեւ ի նախկին փիլիսոփայից»:

Բացի այս թարգմանություններից, ձեռագիրը պարունակում է հետևյալ բնագրերը՝ «Իքսիր արեգական», «Վասն լուսնի», «Վասն հրատի: Առ պողպատ որ կարտոց չի բաներ. վասն առաւել չորութեան», «Վասն լուսնթագի. Առ կլայիկ հալէ եւ լից վրան ձէթ եւ ծածկէ զինքն», «Վասն փայլածուի» և այլն:

Այս ենթավերնագրերի շուրջ հնարավոր թյուրմբռնումներից խուսափելու համար հարկ է նշել հետևյալը. քանի որ ալքիմիկոսների հիմնական նպատակն էր արհեստական եղանակով ստանալ ազնիվ մետաղներ, մի շարք հեղինակներ փորձել են «անտեղյակներից» թաքցնել դրանց էությունը՝ դիմելով խորհրդանշանների ու փոխաբերական արտահայտությունների: Արդյունքում ձևավորվել են հատուկ ալքիմիական ծածկագրեր, որոնք հիմնված էին արևի, լուսնի և մոլորակների նշանների վրա: Այս համակարգում, օրինակ, ոսկին ներկայացվում էր արևի, արծաթը՝ լուսնի խորհրդանիշով, այլ մետաղներ նույնպես ներկայացվում էին համապատասխան երկնային մարմինների անուններով:

Վիեն. 199 ձեռագիրը (18-րդ դ.), վերնագրված «Քիմիա (Ոսկեփորձութիւն)», ընդգրկում է Ա-ԼՁ և Ձ-ՁԲ Դռները, որոնցից շատերը թերի են՝ «Դուռն լուսնի մեծ արուեստի որ օրինակեցաք ի ստեղծուածոցն Աստուծոյ», «Դուռն արձակել տալիին»²⁸ այսպէս է...», «Չուր որով երկաթ հալի», «Դուռն իմաստասիրաց...», «Դուռ մի այլ ի հաւու կիթն», «Դուռն ամենայն ցաւոց դեղ» և այլն:

Ձեռագրի վերջին էջին ներկայացված է աստղագուշակության երկու աղյուսակ՝ «Գ և Ը. և Թ. բարի լինի. գուշակէ թէ չէ մէռած մարդն կենդանի է և բարով» և «Դուռն որ գտնուս զսուր ածեն զաստեղացն որ կոչի դէմք. գիտցիր որ ամէն կենդանակերպն Գ բաժին է արած. և ամէն բաժին. աստղին միէն ասացել զերտ տան ու տէրն որ դիմացն է. այս է աղիւսակս» վերնագրերով:

Վիեն. 1776 ձեռագիրը (1773-ից հետո) վերնագրված է «Քիմիական արուեստ կամ ոսկեփոխութիւն եւ Քաֆին գիրք»: Այն, ինչպես վերնագրից երևում է, քիմիայի վերաբերյալ թարգմանական բանաբաղուցյուն է (տե՛ս ձե-

²⁸ Հմմտ. արաբ./պարսկ. talgh > հյ. տալկ, նաև՝ «նարպաֆար, փեֆեկաֆար»:

ռազմի հիշատակարանը, թ.1բ), որի թերթերին գրված են նաև դեղագրեր: Ձեռագիրն ընդգրկում է երկու բառարան՝ «Բառգիրք արարեալ մահտեսի Գրիգորէ» (կիսատ) և «Բառգիրք արարեալ մահտեսի Գրիգորէ» (հայերեն-թուրքերեն): Ձեռագրի վերջում հեղինակը ներկայացնում է «Յանկ բառից բնական իրաց, բուսոց, արմատից, հանքաց, խոտից եւ կենդանեաց» բաժինը, որը սկսվում է Ա տառով և մնում կիսատ: Շարունակությունը տեսնում ենք Վիեն. 1375 ձեռագրում (տե՛ս ստորև):

Վիեն. 1776 ձեռագիրը գրված է եվրոպական հաշվեգրքի թղթի վրա՝ կապույտ և սև թանաքներով: Ա կազմաստառին և թ. 1ա պատկերված են քիմիային վերաբերող պատկերներ՝ փորձերի համար նախատեսված անոթներ, աղյուսակներ, միջնագրայան քիմիական համակարգի տարրեր և դրանց մոլորակների, մետաղների ու երբեմն դեղագործական նյութերի համարժեքները:

Վիեն. 1375 ձեռագիր մատյանը բառգիրք է, վերնագրված՝ «Յանկ բառից բնական իրաց, բուսոց, արմատից, հանքաց և կենդանեաց»: Բաղկացած է 33 թերթից, գրիչը Կեսարացի տիրացու Կիրակոսն է, հավանաբար գրվել է 1773 թ. հետո: Բառգիրքը թարգմանական, նաև բացատրական բույթ ունի. տրված են բառերի թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, ֆրանսերեն տարբերակները: Որոշ բառերի թարգմանությունները հավելված են նաև օգտակարության և կիրառելիության մասին տեղեկություններով: Պետք է նշել, որ բառի պարսկերեն, արաբերեն, ֆրանսերեն տարբերակների վերևում առկա են «պր.» (=պարսկերեն), «արապ.» (=արաբերեն), «ֆր.» (=ֆրանսերեն) հապավումները, կամ՝ «արապի», «պարսկի», «հայոց», «հոռոմի», մինչդեռ թուրքերենի դեպքում նման նշում գլխավորապես բացակայում է, որից ենթադրելի է, որ հեղինակի և իր լսարանի համար թուրքերենը հասկանալի լեզու էր և կարիք չկար այն ծանոթագրելու: Այս երևույթը թույլ է տալիս ենթադրել, որ ձեռագիրը գրվել է Օսմանյան կայսրության տարածքում և թուրքախոս հայերի միջավայրում, քանի որ բացատրություններում հանդիպում են նաև հայատառ թուրքերեն գրություններ:

Բերենք բառահոդվածների մի քանի օրինակ՝

էջ Ա. «Աղաոռ: սումախ. թաթարի (պր.) (հմմտ. պրսկ. tatarī). կարմիր պտուղ է ի մէջն կուտ ունի»:

էջ Ա. «Ամիկ: չեփին (հմմտ. պրսկ./թուրք. chepesh), պզտի արու այծ կամ ածխչի»:

էջ Գ. «Արջասպ: [զ]աջը ֆալըզ (հմմտ. օսմ. zāj qebrīs), դա[թ] (պր) (հմմտ. պրսկ. kāt), զան (արապ.) (հմմտ. արաբ. zāj), վիթիրի օլում (ֆր.)

(հմմտ. լատ. vitriolum), կալականես (հոռ.) (հմմտ. միջնադարյան լատիներեն՝ հումարենից chalcantum)»:

էջ ԼԱ. «Ճուարիշ²⁹: արմատ մի է, փսխեցնելու հապերու կու մտնայ»:

էջ ԼԳ. «Մաէլ: միէլ (հմմտ.՝ արաբ. melh) որ պս. նամաֆ (հմմտ.՝ պրսկ. namak), հոռ. ալո (հմմտ.՝ հուն. alati), հյր. աղ, ֆր. սալ (հմմտ.՝ լատ. sal), թր. տուզ (հմմտ. թուրք. tuz)»:

Ձեռագիրը հատկապես կարևոր նյութ է պարունակում բնագիտության թեմատիկ դաշտի բառապաշարի պատմական ուսումնասիրության համար:

Սույն հաղորդումը Մաշտոցյան Մատենադարանի գիտաշխատողների Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան կատարած հնգօրյա այցի ընթացքում հավաքած նյութերն ի մի բերելու փորձ է: Վիեննայի Մխիթարյանների մոտ պահվող բժշկական և բնագիտական ձեռագիր մատյանները մինչ այժմ համակողմանի ուսումնասիրության չեն ենթարկվել և չեն ընդգրկվել թեմատիկ հետազոտությունների մեջ: Ներկայացված ձեռագրերի լեզվական նյութը ներառվելու է հայերեն բժշկական ձեռագրերի հանրալեզվաբանական ուսումնասիրությունների մեջ: Դրանց մեջ կան իսլամական, նաև եվրոպական հայտնի բժշկական երկերի հայերեն թարգմանություններ, ժողովրդական կիրառական բժշկարաններ, որոնք տարբեր գրչության վայրերի հայերենի բարբառային հարուստ նյութ են պարունակում, բազմալեզու բառարաններ, որոնք կարևոր են հայերեն բժշկական բառապաշարում հունարեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն լեզվաշերտերի նույնականացման համար:

²⁹ Պրսկ. gowāresh «մարսում, մարսողություն» բառի արաբականացված ձևն է, միջնադարյան բժշկական բնագրերում այն խյուսի անվանումն է, որը պատրաստվել և օգտագործվել է մարսողությամբ նպաստելու համար: Ընդ որում, ջուվարիշները եղել են անուշահոտ և անուշահամ խյուսեր: Ներկայացվող բառգրքում այն ներկայացվում է որպես արմատի անուն: